2022-2023 ուսումնական տարի

Դասղեկի տարեկան

աշխատանքային ծրագիր

Դպրոց՝ Ծաղկաձորի միջնակարգ դպրոց

Դասարան՝ 8-րդ

Դասղեկ՝ Ա. Խաչատրյան

Հաշվի առնելով ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, տարիքային շրջանի հետ կապված առանձնահատկությունները, անհատական մոտեցման կանոնները՝ ես, որպես դասղեկ, նախընտրում եմ <<Դասղեկի ժամ>> դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Այդ դասաժամերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից, առած- ասացվածքներից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Հավելեմ, որ տվյալ ցանկը փոփոխական է, քանի որ երեխաներն ու նրանց վարքն ու բարքն են թելադրելու թեմաների առաջնահերթությունը: Եվ նկատված թերացումները կարելի է միայն վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, աշակերտների պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճ և աշխատանք: Բոլոր լրացուցիչ թեմաները տեղ կգտնեն դասղեկի իմ օրվա պլանում:

Դասի համարը	Դասի թեման
1.	Նախորդ ուս. տարվա արդյունքների վերլուծում
2.	Նոր ուս. տարվա անելիքների ծրագրում
3.	Իմ տունը, իմ ընտանիքը
4.	Շաբաթվա հերթապահության կազմակերպումը
5.	Վատ սովորություններ, ինչպես պայքարել դրանց դեմ
6.	Ուսուցիչ- ծնող -աշակերտ կապ
7.	Ուսումը և դրա անհրաժեշտությունը
8.	Նախասիրություններ
9.	Ինչ է պատասխանատվության զգացումը
10.	Աշակերտի իրավունքներն ու պարտականությունները
11.	Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը
12.	Մեր երկրի օրհներգի ստեղծման պատմությունը
13.	Հաջողության բանաձև
14.	Ինչպես հաղթահարել ծուլությունը
15.	Ժպիտը մարդու կյանքում

16.	Բարձրագույն կրթության կարևորությունը
17.	Ինչ կուզեի դառնալ և ինչու
18.	Առաջադիմության քննարկում
19.	Մաքուր պահենք բնությունը
20.	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում
21.	Ձմռան հմայքը Ծաղկաձորում
22.	Փառք մեր հերոսներին
23.	Մեր ազգային տոները
24.	Գիրք նվիրելու օր
25.	Նորագույն տեխնոլոգիաների կարևորությունը
26.	Գարուն և սեր
27.	Ինչ գեղեցիկ է աշխարհը
28.	Զրույց մեր կատարած լավ գործերի մասին
29.	Լինել արդար, ազնիվ և օրինապահ
30.	Ուժեղ լինել նշանակում է ...
31.	Այցելություն Օրբելի եղբայրների տուն-թանգարան
32.	Գրքերին վերաբերվենք խնամքով
33.	Երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում
34.	Ինչ գրքեր են պատրաստվում ընթերցել ամռանը

Ուս. տարվա ընթացքում նախատեսում եմ նաև բաց կամ ուսուցանող դաս, որի թեման կհամաձայնեցնեմ գործընկերներիս և դասարանի աշակերտների հետ: